Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

a r a v o t d a i l y

ISSN 1829-2224

3/4100/ 12 հունվարի 2012 հինգշաբթի

Ա

## Բարեգործական պրոցես

Հատված ՀՀԿ փոխնախագահի Ռազմիկ Զոհրաբյանի հարցազրույցից «Առավոտ» թերթին. «Տեսեք, մեծամասնականով առաջադրվում են, այսպես ասած, օլիգարխները կամ գործարարները, եւ մարդիկ նրանց ընտրում են: Քանի դեռ ժողովուրդը իր ձայնը տալիս է այդ անձանց, մեծամասնականը պետք է լինի: Բնականաբար, մտավորականը կամ ինտելիգենտ մարդը չի կարող տանիք վերանորոգել, ծախսեր անել, գործարարը կարող է, այսինքն՝ մեր հասարակությունը դեռեւս դրա կարիքը զգում է, եւ եթե մենք փակենք այդ լուսամուտը, շատ հնարավոր է՝ այլ բաներ լինեն: Իսկ այս դեպքում հասարակությունը կարծես օգնության կարիք է զգում, եւ հենց այդ բիզնեսմենները այդ օգնությունը տալիս են: Ես այդտեղ վատ բան չեմ տեսնում, կարելի է ասել՝ ընտրական, բարեգործական ինչ-որ պրոցես է (ծիծաղում է)»:

Ես էլ եմ ծիծաղում պարոն Զոհրաբյանի հետ միասին: Որովհետեւ այդ պատգամավորը միանգամայն ճշգրիտ է բնութագրել արդեն գրեթե 17 տարի Հայաստանում տեղի ունեցող ընտրական, իսկ ավելի լայն իմաստով՝ քաղաքական պրոցեսները: Քանի որ ժողովրդին, հասարակությանը մտավորական մարդիկ պետք չեն, այլ պետք են տանիք վերանորոգողներ եւ ծախս անողներ, շատ տրամաբանական է, որ հենց այդպիսի մարդիկ պետք է լինեն խորհրդարանում: Ինչի՞ համար՝ դուք կհարցնեք: Շատ պարզ. որպեսզի կառավարությունում եւ պետական ղեկավարման այլ օղակներում նստած՝ իրենց նման ոչ մտավորական մարդկանց հետ միասին կարողանան շռայլորեն օգտվել կյանքի բարիքներից: Իսկ ժողովուրդը եւ հասարակությունը, որն այս 17 տարում արդեն հասցրել է վերջնականապես հուսահատվել եւ բարոյալքվել, պետք է բավարարվի վերանորոգված տանիքով եւ իր վրա ծախսած այլ մանր գումարներով: Դա է նրա պահանջարկը, եւ եթե, ի դեմս մեծամասնական պատգամավորների, դրան ընդառաջ կստեղծվի համապատասխան առաջարկ, կլինեն «այլ բաներ», ըստ երեւույթին՝ սոցիալական բունտ:

Ամենահետաքրքիրն այն է, որ պարոն Զոհրաբյանի ասածների մեջ կա ռացիոնալ հատիկ: Նա արձանագրում է իրականությունը՝ իր ստատիկ, քարացած վիճակով: Ժողովուրդն ուզում է նայել արյունոտ սերիալներ՝ նրան ցույց են տալիս դրանք, ուզում է լսել ռաբիս երաժշտություն՝ նրա համար դա նվագում են, ցանկանում է, որ պատգամավորները վերանորոգեն իրենց տանիքները՝ նրանք էլ վերանորոգում են: Մի խոսքով՝ աշխատավորների բազմաթիվ խնդրանքներով քաղաքականությունը փոխարինվում է բարեգործությամբ:

Շատ լավ: Ենթադրենք, այդպես է: Միայն թե հարց է ծագում՝ իսկ ինչո՞ւ չկազմակերպել 100 տոկոսանոց մեծամասնական ընտրություններ: Ավելի շատ տանիքներ կվերանորոգվեն: Բայց այդ դեպքում ինչի՞ համար են պետք կուսակցությունները: Այդ թվում՝ Հանրապետական կուսակցությունը:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «Ողբամ զքեզ, հայ ժողովուրդ»



Այսպես արձագանքեց Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահի Արամ Սարգսյանը Հանրապետական պատգամավոր Ռազմիկ Զոհրաբյանի՝ երեկ մեր թերթում արտահայտած այն մտքին, որ մեծամասնական կարգով առաջադրվողների կարիքը մեր ժողովուրդը ունի, քանի որ վերջիններս տարբեր կարգի օգնություններ են տալիս մարդկանց: Արամ Գասպարիչը զավեշտ է համարում, որ իշխող՝ պետական ծրագիր իրականացնող կուսակցության ներկայացուցիչը նման մտքեր է արտահայտում: «Այսինքն՝ մենք առաջարկելով 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգ՝ փորձում ենք քաղաքական համակարգը կարգավորել, իսկ իշխող կուսակցության ներկայացուցիչն ասում է՝ չէ, ժողովուրդ, որպես պետություն մենք չենք կարող կատարել մեզ հատկացված գործառույթները, դրա համար թույլ ենք տվել, որ մեծամասնական կարգով ընտրվելով՝ օլիգարխները ստվերային փողերից «բարեգործություն» անեն: Սրանից մեծ խայտառակություն ես չգիտեմ»,- ասաց Արամ Սարգսյանը:

ՀԴԿ առաջնորդի այլ դիտարկումները՝ վաղվա համարում:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Թեկնածուների թիվը հասավ երեքի

Երեկ երեկոյան պարզ դարձավ, որ Հրազդանի քաղաքապետ Արամ Դանիելյանի խորհրդական Հովհաննես Պըտավյանը եւս իր թեկնածությունն է առաջադրել Հրազդանի քաղաքապետի՝ փետրվարի 12-ին կայանալիք ընտրություններում: Թիվ 25 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Արմեն Բադալյանն «Ա1+»-ին տեղեկացրել է, որ մինչ այս պահը երեք թեկնածու է ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը՝ գործող քաղաքապետ Արամ Դանիելյանը, նրա խորհրդական Հովհաննես Պըտավյանը եւ Հրազդանի նախկին քաղաքապետ Սասուն Միքայելյանը: Իսկ ԸՆՀ-ն թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը կընդունի մինչեւ հունվարի 13-ը:

Կարդացեք էջ 3:

### ՀՌԱՀ-ն էլ է լավ բան, Վերահսկիչ պալատն էլ, բայց՝ եթե աշխատեն

«Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը գնահատելով հունվարի 9-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի ստեղծման փաստը՝ ասաց, թե դա ընդհանուր առմամբ նորմալ բան է, եթե իրականում աշխատի իր գործառույթների շրջանակներում. «Ասենք, իրականում ՀՌԱՀ-ը լա՞վ բան է, թե՞ վատ. իհարկե՝ նորմալ բան է, եթե աշխատի: Վերահսկիչ պալատը լա՞վ բան է, թե՞ վատ. իհարկե՝ լավ, եթե աշխատի: Նույնը կարելի է ասել դատարանների եւ պետական որեւէ կառույցի, այդ թվում՝ Ազգային ժողովի մասին»:

Կարդացեք էջ 2:

### Հրդեհ՝ Թբիլիսիի Սուրբ Նշան եկեղեցում

Օրերս Թբիլիսիի Սուրբ Նշան հայկական եկեղեցում բռնկվել է հրդեհ, որը մարելու ընթացքում փլուզվել է հուշարձանի հարավարեւելյան սյունը: ՀՀ մշակույթի նախարարությունից «Առավոտին» տեղեկացրին, որ Թբիլիսի է գործուղվել մասնագիտական հանձնախումբ՝ Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության պետ Սերժիկ Առաքելյանի գլխավորությամբ՝ դեպքի հանգամանքները տեղում ուսումնասիրելու եւ Վրաստանի մշակույթի նախարարության հետ համատեղ քննարկելու իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Հայելի» ակումբի հյուրն է ԿԳՆ հանրակրթության վարչության պետ Նարինե Հովհաննիսյանը:

### Եղանակ

Երեւան -5 +1, Շիրակ -17 -2, Կոտայք -15 -2, Գեղարքունիք -15 -2, Լոռի -10 +1, Տավուշ -7 +2, Արագածոտն լեռներ -15 -2, Արագածոտն նախալեռն. -7 +1, Արարատ -7 +2, Արմավիր -7 +2, Վայոց Ձոր լեռներ -15 -2, Վայոց Ձոր նախալեռն. -8 +2, Սյունիքի հովիտներ -5 +6, Սյունիքի նախալեռներ -8 +3, Արցախ -2 +6

## «Իմ եղբայրը գողություն չի արել»



Օրերս «Առավոտի» հետ զրույցում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Մաքսիմ Հակոբյանը ասաց, որ Քաջարանի գյուղապետի եղբայրը 2008թ.-ին մոլիբդենի գողության համար դատապարտվել է եւ հիմա ազատազրկված է: Երեկ Քաջարանի գյուղապետ Ռաֆիկ Աթայանից փորձեցինք ճշտել լուրի իսկությունը.

- Պարոն Աթայան, ճի՞շտ է, որ Ձեր եղբայրը 2008 թվականին մոլիբդենի գողության համար դատապարտվել է:

- Իմ եղբայրը գողություն չի արել, իր մասնաբաժին մոլիբդենից մի փոքր վերցրել է, ինքը իրեն հասանելիք փայը վերցրել է: Ինքը քաջարանցի է:

- Բա հիմա ինչի՞ է նստած:

- Իր անձնական փայ մոլիբդենը վերցրել է՝ դրա համար:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

## Լուրջ կլինի, եթե պաշտոնապես հաստատվի

Օրերս «Ռեգնում» գործակալությունը՝ հղում անելով իր լավատեղյակ աղբյուրներին, տեղեկատվություն տարածեց, որ Սոչիում, հունվարի 23-24-ին, ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը կհյուրընկալի Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին: Պաշտոնական աղբյուրները դեռեւս չեն հաստատում, սակայն չեն էլ հերքում սույն տեղեկատվությունը:

Aravot.am-ի հարցին՝ եթե այնուհանդերձ նախագահների հանդիպումը կայանա, դրանից ինչ-որ սպասելիքներ կա՞ն, Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի ղեկավար Մանվել Սարգսյանն ասաց. «Եթե անգամ նման բան էլ կա, դեռ պարզ չէ, թե հանդիպման նպատակը որն է, թեման որն է: Հետեւաբար, ի՞նչ սպասելիքների մասին կարող է խոսք լինել: Կարծում եմ, որ ամեն ինչ ավելի լուրջ կլինի, եթե իրենք գոնե հաստատեն հնարավոր հանդիպման մասին լուրերը եւ քննարկվելիք հարցերի օրակարգը հրապարակեն»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀՀ-ում անկախ մարմին կա՞, որ էթիկայի հանձնաժողովը անկախ լինի

### Ընդդիմադիր գործիչների դիտարկմամբ՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի ստեղծման գաղափարը ետին նպատակներ ունի:

Հունվարի 9-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագիր էր ստորագրել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամներ նշանակելու մասին՝ հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածը: Օրենքը ՀՀ խորհրդարանում ընդունվել էր դեռեւս անցյալ տարվա կեսերին, բայց դրա եզրափակիչ եւ անցումային դրույթների համաձայն՝ այն ուժի մեջ էր մտնելու եւ մտավ 2012թ. հունվարի 1-ից: Օրենքի առանձին հոդվածներ, այդ թվում՝ հանձնաժողովի ստեղծումը, ուժի մեջ էր մտել դեռ 2011-ի նոյեմբերի 1-ից, բայց իր գործունեությունը սկսելու էր ոչ ուշ, քան 2012թ. հունվարի 20-ը: Հիշեցնենք, որ սույն օրենքով հիշյալ հանձնաժողովին վերապահված գործառույթների թվում են՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց եւ սույն օրենքով նախատեսված այլ անձանց հայտարարագրերի ռեեստրի վարումը, հայտարարագրերի վերլուծությունը եւ հրապարակումը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման բացահայտումը եւ էթիկայի կանոնների խախտման բացահայտումը ու դրանց վերացմանն ու կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Ըստ էության, ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվել է մի մարմին, որն օժտված է նաեւ այնպիսի գործառույթներով, որոնց մի մասն այսօր էլ, ցանկության դեպքում, կարող են իրականացնել ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ նախագահի, ԱԺ վերահսկողական ծառայությունները կամ իրավապահ մարմինները, ասենք՝ դատախազությունն ու ոստիկանությունը, որոշ դեպքերում՝ ՀՔԾ-ն, որովհետեւ հանձնաժողովին վերապահված գործառույթները ուղղակիորեն կարգավորվում են հենց գործող օրենքներով, որոնց խախտման դեպքում համարժեք իրավական պատասխանատվություն սահմանելու համար կան քաղաքացիական ու քրեական դատարաններ: Իսկ եթե հանձնաժողովի կողմից բացահայտված խախտումների դեպքերում պատասխանատվությունն իրավական չի լինելու, այլ լինելու է զուտ խորհրդատվական առաջարկ կամ էլ «իշխանության ունով» հարկադիր կատարման ենթակա, ապա հանձնաժողովը կարող է շատ արագորեն վերածվել կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործառույթներ իրականացնող մի հերթական պետական օղակի:





Նախկինում պետեկամուտների նախարար, նաեւ ԱԺ նախկին պատգամավոր, իսկ այսօր ընդդիմադիր «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ Սմբատ Այվազյանը aravot.am-ի հետ զրույցում (http://www.aravot.am/2012/01/11/25647/) մեկնաբանելով այս հանձնաժողովի ձեւավորման փաստը՝ ասաց, թե սույն հանձնաժողովի որոշ գործառույթներ պատկանում են ՀՀ ԿԱ Պետեկամուտների կոմիտեին, որը կարող էր դրանք իրականացնել, եթե լիներ երկրի բարձրագույն քաղաքական այրերի քաղաքական կամքը:

ԱԺ «Ժառանգություն» խմբակցության ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանը չհամաձայնեց, թե այդ՝ մասնավորապես բարձրագույն իշխանության ներկայացուցիչների գույքի եւ եկամուտների հայտարարագրի եւ դրանց վերաբերյալ իրական փաստերի բացահայտումը կամ դրանց համադրման մասին տեղեկության տրամադրումը ՊԵԿ-ի գործառույթն է. «Հանձնաժողովի գործառույթներից մեկը, ըստ էության, հենց այդ համադրությունն է, եւ նա ոչ միայն պետեկամուտների կոմիտեից, այլ նաեւ այլ աղբյուրներից կարող է նման տեղեկություններ ստանալ, հարցումներ անել՝ պարզելու համար, թե կոնկրետ բիզնեսը որեւէ կապ ունի՞ բարձրաստիճան որեւէ պետպաշտոնյայի հետ: Պետեկամուտները կարող է տալ միայն այն տեղեկությունը, որն իր մոտ պաշտոնապես գրանցված է, բայց կոնկրետ բիզնեսի հետ պետպաշտոնյայի հնարավոր կապը արձանագրել չի կարող, որովհետեւ նա օրենքով այդ լիազորությունը չունի, իսկ նորաստեղծ հանձնաժողովն ունի»:

Այսուհանդերձ, «Ժառանգության» ներկայացուցիչն էլ արձանագրեց, որ հիշյալ օրենքի ու հանձնաժողովի ստեղծումը շատ որոշակի առնչություններ ունի առաջիկա ընտրությունների հետ. «Ցավոք, մեր երկրում դեռեւս որեւէ անկախ հանձնաժողով կամ պետական մարմին չկա, որն օրենքով սահմանված իր գործառույթները ամբողջ լիազորությամբ իրականացնի: Դրանք բոլորն էլ որոշակի թելերով կապված են իշխանությանը եւ, ըստ էության, իշխանության կամակատարն են եւ ոչ թե անկախ գործունեություն են իրականացնում: Այնպես որ՝ քանի դեռ մեր երկրում կառավարման համակարգում իրական հակակշիռներ չեն ներդրվել, նույնիսկ Սահմանադրությամբ՝ անկախ դատարանը անկախ չի, բնականաբար, այդ մարմիններն իրենց գործառույթները չեն կարողանալու իրականացնել ու լինելու են ընդամենը իմիտացիոն»:

Իսկ հանձնաժողովը որպես մահակ կարո՞ղ է օգտագործվել: Բանն այն է, որ դրա ձեւավորման հրամանագրի հրապարակումից հետո ոմանք նկատեցին, թե այն կոչված է լինելու Սերժ Սարգսյանի ընդդիմախոսներին կամ մրցակիցներին, օրինակ՝ ԲՀԿ-ին, զսպելուն: «Որպես մահակ կարող է օգտագործվել, կարծում եմ, հիմնականում հենց իշխանության անհնազանդ ներկայացուցիչների համար: Ընդդիմության դեմ դա կիրառվել չի կարող»,- նկատեց պատգամավորը՝ մասնավորեցնելով, թե դա ավելի շատ ընդհանուր մոտեցում է լինելու, քան կոնկրետ ուժին կամ, օրինակ, ԲՀԿ-ին միտված քայլ, որովհետեւ «խելոք պահել բոլորին է պետք»:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Շիրակի նորանշանակ ոստիկանապետ Կարեն Բաբակեխյանը Ամանորից ուղիղ 2 օր առաջ Գյումրու կուսանոցում տեղի ունեցած մարզխորհրդի նիստի ժամանակ aravot.am-ին խոստացավ, որ Շիրակի մարզում այլեւս կրակոցներ չեն հնչի, ու չնայած մարզպետ Աշոտ Գիզիրյանը նրան անմիջապես սաստեց՝ ասելով, որ նման խոստում չի կարելի տալ, այդուհանդերձ՝ ոստիկանապետն արդեն խոստացել էր: Խոստումից ուղիղ 11 օր անց Շիրակ մարզի Արթիկ քաղաքում հնչեցին կրակոցներ, ընդ որում՝ «ռազբորկայի» մեջ մտան Բաբակեխյանի աշխատակից ոստիկանն ու կրիմինալ ուժերը:

# Գետափցի կրիմինալը ԲՀԿ-ականների կազինոյի հետ կապ չունի՞



Քաշքշուկից վիրավորված ոստիկանը:

Հիշեցնենք, որ նախնական վարկածով 25-ամյա ոստիկան Լուկաշ Մինասյանի՝ Ռուսաստանում գտնվող եղբայրը, կրիմինալների բառապաշարով ասած՝ «քաշել» է հարակից գյուղի քրեական հեղինակության՝ Անուշավան Բաղդասարյանի խորթ գնացած եղբորը, ինչն էլ դարձել էր աղմկոտ հաշվեհարդարի պատճառ: Անուշավանը գողացել էր ոստիկանին, մի խումբ գետափցիների հետ տարել էր իր ծանոթի սրճարան, հայհոյել, ծեծել, ահաբեկել, որին ի պատասխան՝ ոստիկանը գործի էր դրել ծառայողական «Մակարով» տեսակի ատրճանակը՝ վնասելով գետափցու ոտքերը:

Տարածված լուրերի համաձայն, գետափցի Անուշավան Բաղդասարյանը ԱԺ պատգամավոր, ԲՀԿ Շիրակի մարզային կառույցի պատասխանատու Մարտուն Գրիգորյանի թիկնազորից է, նրա սպանված հորեղբոր՝ Սերոբ Գրիգորյանի մտերիմը: Ու չնայած ԱԺ պատգամավոր Մարտուն Գրիգորյանը aravot-am-ին տված հարցազրույցում վստահեցրեց, որ իրեն ընտրությունների նախաշեմին սեւացնում են, ինքը Անուշավանի հետ 5 տարի է՝ կապ չունի, այդուհանդերձ, մենք ԲՀԿ-ի մարզային գրասենյակից փորձեցինք նորից ճշտել՝ այդ դեպքում ինչո՞ւ է ԱԺ պատգամավորի հորեղբոր որդին՝ Ռուստամ Գրիգորյանը, հենց Գետափ գյուղում կազինո հիմնել:

Ի դեպ, մենք 3 տարի առաջ անդրադարձել էինք գետափցիների ահազանգին, ովքեր բողոքում էին, թե պատգամավորի հորեղբոր որդին, որը Գյումրու գազի գրասենյակի փոխտնօրենն է, «դուրս է գցել» գյուղի երիտասարդությանը, նրա կազինոյում դրսից խաղացողները ձեռքի հետ աղջիկներ են տանում-բերում, իսկ գյուղի ջահելները, մոդայից հետ չմնալու համար, տան կով ու ոչխարն էին ծախում, պարտքեր էին անում ու կազինո հաճախում:

Պատգամավոր Մարտուն Գրիգորյանի օգնական Աղասի Աբրահամյանը այս հարցի հետ կապված պարզաբանեց հետեւյալը. «Որտեղ ասես, ինչ գործ ասես՝ դնում են, Ռուստամ Գրիգորյանը կազինո էր հիմնել նաեւ Ախուրյանում, հիմա Գետափի կազինոն չի աշխատում, փակվել է եկամտաբեր չլինելու պատճառով, եւ գետափցի Անուշավան Բաղդասարյանը բացարձակապես առնչություն չունի կազինոյի հիմնադրման ու փակման հետ: Դուք ինձանից լավ գիտեք, թե, ըստ օրենքի, որտեղ կարելի է կազինո հիմնել. այն պետք է լինի ճանապարհից, բնակավայրից հեռու, Գետափը այդ չափանիշներով է ընտրվել, այստեղ գետափցի ծանոթներ ունենալը դեր չի խաղացել»:

Նշենք, որ Գյումրու Գալուստ Գյուլբենկյանի վիրաբուժական հիվանդանոցում գտնվող գետափցի Անուշավան Բաղդասարյանի առողջական վիճակը բժիշկները գնահատում են միջին ծանրության:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 12.01.2012

# Սասուն, Արամ, մարզպետ, ՀԱԿ եւ իշխանություն

## Ի՞նչ ընտրություններ են սպասվում Հրազդանում

Փետրվարի 12-ին Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում տեղի կունենա քաղաքապետի ընտրություն: Գործող քաղաքապետը արդեն չորրորդ անգամն է փորձելու վերընտրվել, իսկ այլընտրանքը ՀԱԿ ներկայացուցիչ Սասուն Միքայելյանն է: Իհարկե, երեկ ավելի ուշ հայտնվեց եւս մեկ թեկնածու՝ գործող քաղաքապետի խորհրդականը, բայց դա հենց այն այլընտրանքը չէ, որը պետք է լիներ: Ընտրության հնարավորությունները, ինչպես ասում են, խիստ սահմանափակ են. աջ գնան, թե ձախ՝ ընտրությունը լինելու է ոչ շռնդալից: «Առավոտը» դեռ անցած տարեվերջին էր գրել, որ կրքերը Հրազդանի քաղաքապետի ընտրությունների շուրջ գնալով շիկանալու են: Եվ արդեն այսօր, երբ հայտնի են թեկնածուները՝ եւ հրազդանցիները, եւ քաղաքական ուժերը, եւ վերլուծաբանները պարզապես շփոթմունքի մեջ են: Հասկանալի է, որ եւ գործող քաղաքապետը, եւ Սասուն Միքայելյանը, եւ խորհրդականը ունեն իրենց ընտրազանգվածները, եւ հասկանալի է, որ սրանք էականորեն իրարից տարբերվող են: Հասկանալի է նաեւ, որ երբ մեկը չորս անգամ շարունակ վերընտրվում է միեւնույն պաշտոնում, մարդիկ այդ մեկից որոշակի հոգնածություն են զգում: Հասկանալի է նաեւ, որ ամբողջ Հրազդանը ընդդիմադիր չէ, եւ այստեղ եւս կան մարդիկ, որոնց համար այլընտրանքը ամենեւին էլ ընդդիմադիր թեկնածուն չէ: Ուրեմն ինչո՞ւ այս դեպքում իշխանությունները չունեն իրենց սեփական այլընտրանքը եւ նորից ու կրկին քաղաքապետի պաշտոնում են առաջադրում նույն թեկնածուին: Կադրային սով դժվար թե լինի, ուրեմն ինչու՝ նույն թեկնածուն, գուցե այնքան լավ է աշխատել, որ նրան արժանի ուրիշ մեկին չեն էլ փորձում գտնե՞լ կամ գուցե համարում են, որ ներկայացվածները Սասուն Միքայելյանին արժանի՞ մրցակիցներ են: Իսկ գուցե Հրազդանում նույնպե՞ս աշխատելու է Իջեւանի սցենարը: Ժամանակին, երբ Իջեւանում էին քաղաքապետ ընտրում, նույն իրենք՝ Հանրապետականներն էին խոստովանում, որ գործող քաղաքապետից բացի՝ ում թեկնածությունն էլ դնեին, կընտրվեր: Մյուս կողմից՝ եթե Իջեւանում հաղթողը դարձյալ կոալիցիոն ուժի ներկայացուցիչն էր, ապա Հրազդանում իրավիճակը այլ է:



Գաղտնիք չէ, որ Կոտայքի մարզը խիստ դժվար մարզ է, եւ այստեղ մարզպետը եւս երկարակյաց է եւ արդեն շուրջ 11 տարի պաշտոնավարում է: Մեր պատկերացմամբ՝ Հրազդանի քաղաքապետի ընտրությունները իրականում լինելու են մարզպետի ընտրություններ, եւ որքան ջանք թափելու է գործող քաղաքապետը վերընտրվելու համար (եթե ջանք թափելու է), նույնքան եւ գուցե ավելի ջանք պետք է թափի մարզպետը, քանի որ Հրազդանի պես քաղաքը ընդդիմության թեկնածուի տնօրինությանը հանձնելը խիստ վտանգավոր է նույն իշխանության համար: Թեպետ, մյուս կողմից էլ, եթե ընդդիմության թեկնածուն դառնա քաղաքապետ, անմիջապես կդառնա իշխանության ներկայացուցիչ, քանի որ քաղաքը ղեկավարվում է իշխանական լծակներով, եւ ինչ էլ անի ընդդիմադիր որեւէ քաղաքապետ, չի կարող իշխանության գլխից վեր թռչել, քանի որ անմիջապես եւ ֆինանսական աղբյուրները կփակվեն, եւ այլ լծակներ: Իսկ եթե առանձին վերցրած՝ մեկ քաղաքում փորձ է արվում քաղաքական էքսպերիմենտներ անել, ապա դա, անկասկած, բավական ռիսկային է լինելու ոչ միայն իշխանության, այլեւ նույն ընդդիմության համար:

Հոգեբանները պնդում են, որ խաղը կարող է լինել կառուցողական եւ ապակառուցողական: Հոգեբանների խոսքերով՝ կառուցողական խաղը հաղթահարելի է:

Մեր տեղեկություններով՝ Սասուն Միքայելյանի եւ Կոտայքի մարզպետի հարաբերությունները վատ են եղել ի սկզբանե, եւ պատճառը եղել է խաղը, քանի որ ազատամարտիկ Սասուն Միքայելյանին, ով մինչ այդ տեր ու տիրական էր եւ Հրազդանում, եւ մարզում, մարզպետը ժամանակին շատ քիչ հնարավորություններ է թողել՝ մարզում ազատ գործելու: Հիմա եկել է պահը, եւ Սասուն Միքայելյանը փորձելու է ռեւանշ վերցնել: Իսկ թե ինչու Սասուն Միքայելյանի թեկնածությունը չի առաջադրել ՀԱԿ-ը, դա արդեն ուրիշ պատմություն է: Ըստ որոշ վերլուծությունների՝ ՀԱԿ-ը, իհարկե, կպաշտպանի Սասուն Միքայելյանին, սակայն միաժամանակ կլուծի ՀԱԿ համամասնական ընտրացուցակի հարցը: Եթե պարոն Միքայելյանը ընտրվի քաղաքապետ, նրան կասվի՝ որ էլ ինչո՞ւ ես ուզում ցուցակում լինել, արդեն քաղաքապետ ես: Իսկ եթե չընտրվի, ապա, անշուշտ, կասվի՝ էլ մեզնից ի՞նչ ես ուզում, անգամ քո հարազատ քաղաքում քեզ չընտրեցին: Ու այս մեկի հարցը կփակվի: Հասկանալի է, չէ՞, որ ցուցակն առանձգական չէ: Էլեկտրոնային կայքերից մեկի հետ զրույցում պարոն Միքայելյանը, պատասխանելով ՀԱԿ-ի՝ իրեն սատարելու մասին հարցին, ասել էր. «Էդի ՀԱԿ-ը կորոշի: Ո՞նց կարա չպաշտպանի: Բոլոր ուժերն էլ պտի պաշտպանեն, գիտակից ուժերը, կուսակցությունները, կազմակերպությունները պտի պաշտպանեն: Ստեղ քաղաքի հարցն ա, եկեք չտանենք քաղաքականության դաշտ: Էսօր եթե վերցնենք, Հրազդանում մի քանի կուսակցություններ կան, գրասենյակներ ունեն, վերջիվերջո ստեղի բնակիչներ են, չէ՞, էդ մարդիկ էլ են շահագրգռված, որ քաղաքը տեսքի գա, նորմալ ըլնի, օրենք գործի: Ես գալիս եմ մարդկանց իրավունքները պաշտպանեմ: Բոլորն էլ կուզենան նորմալ քաղաքում ապրել, նորմալ քաղաքապետ ունենալ»:

Հրազդանի քաղաքապետի՝ փետրվարի 12-ին կայանալիք ընտրությանը ընդառաջ՝ բազմաթիվ վերլուծություններ են արվում, Կոտայքի մարզպետը խոստանում է ազատ եւ արդար ընտրությունների ապահովում, թեկնածուներից մեկը՝ Սասուն Միքայելյանը, խոստանում է հաղթել, առայժմ ոչ մի խոսք չի ասել գործող քաղաքապետը:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ

## ՄԵԿ ԼՈՒՐ

### Սամվել Բաբայանի գտնվելու վայրը չգիտե՞ն



«Առավոտը» վերջին մեկ ամսում փորձեր է արել՝ գտնելու ԼՂՀ պաշտպանության բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանին: Նրա անձի հետ կապված կան լուրեր, որ հետախուզում է հայտարարվել առանձնապես խոշոր չափերի հասնող գույքի ապօրինի ձեռք բերման համար, կան տեղեկություններ, թե նրա «գործով» տուժողները 10-ն են, որոնց նա պարտք է հսկայական գումարներ: Բաբայանի հեռախոսն անվերջ անհասանելի է, եւ նրա մերձավորագույն շրջանակները նշում են, թե նա «իրենց իմացածով» Մոսկվայում է: Սակայն երբ փորձ է արվում ճշտել հրամանատարի մոսկովյան բնակավայրը, իմացողները լռում են:

Ռ. Մ.

# Ռաֆիկ Պետրոսյանը նշեց իր նման եւս 3 պատգամավորի անուն

100% համամասնական ընտրակարգին անցնելու վերաբերյալ վերջին շրջանում բազմաթիվ քննարկումներ եղան: Ասուլիսների եւ քննարկումների ժամանակ, երբ խոսք էր գնում մեծամասնականով ընտրված իսկական, բանիմաց պատգամավորների մասին, որպես կանոն, բոլորը նշում են 2 անուն՝ Ռաֆիկ Պետրոսյանի եւ Կորյուն Նահապետյանի: Երեկ aravot.am-ը մեծամասնական ընտրակարգով անցած պատգամավորի խորհրդանշական կերպարներից մեկից՝ Ռաֆիկ Պետրոսյանից հետաքրքրվեց, թե բացի իրենից՝ հիշո՞ւմ է իր նման այլ գործընկերների, որոնք աշխատում են: Նա սկզբում դժվարացավ առանց ցուցակի անուններ տալ, հետո հիշեց 3 հոգու անուն՝ Գալուստ Սահակյանի, Էդուարդ Շարմազանովի եւ Գագիկ Մինասյանի. «Եթե էսպես դնենք ցուցակը նայենք, էնքան էլ ձեր ասած պատկերը չենք ստանա, որ 100 տոկոսով օլիգարխներ են»:



Ըստ պարոն Պետրոսյանի, կան բիզնեսմեններ, որոնք իրենց գյուղի բնակչության համար մի շենք են կառուցել եւ կարիքավորներին տվել. «Սա խրախուսելի բան է, եթե մարդն օգնում է իր համագյուղացիներին, կարիքավորներին»: Մեր հարցին՝ այդ շենքը չէ՞ն կարող առանց մեծամասնականով ընտրվելու կառուցել՝ պարոն Պետրոսյանը պատասխանեց, որ դա առանձին հարց է եւ պետք է «Բարեգործության մասին» օրենքում էլ ամրագրեն, որ ով ինչ անի՝ առանց ընտրակաշառքի վերածելու անի, այնպիսի բարեգործություն անի, որն ունեցել ենք Մանթաշովի օրոք:

Ռաֆիկ Պետրոսյանի խոսքերով՝ «Եթե Գյումրիից ընտրված պատգամավորները չլինեին, այս 10-15 տարվա ընթացքում նրանք չէին պայքարի եւ դժվար կլիներ Գյումրին վերականգնել: Նրանք շատ մեծ գործ արեցին՝ անընդհատ բարձրացնելով այդ հարցը, օրինագծեր մշակելով: Այնպես որ, մարզերից ընտրված պատգամավորներից շատերն իրենց մարզերի հարցերը բարձրացնում են: Օրինակ, «Ջերմուկ գրուպի» ղեկավարը՝ Աշոտ Արսենյանը, բարձրացրեց մի հարց՝ Ջերմուկում 20 տարի անտառները չէին սրսկվել, մլակը ուտում էր ժողովրդին, հանգստացողներին, նա օգնեց պետությանը՝ անտառները սկսկվեցին, այս 2 տարի է՝ արդեն հնարավոր է քայլել Ջերմուկում: Ես քանի՞ օրինակ բերեմ, որ իրոք մարզերից ընտրված պատգամավորները պատասխանատվություն են զգում եւ զբաղվում են իրենց մարզի վիճակի բարելավմամբ»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

# «Հայաստանը հարմարեցված չէ հաշմանդամի համար»

Տեսողական խնդիրներ ունեցող Նաիրան, թեեւ մեծ դժվարությամբ, բայց աշխատում է, երեխային խնամում եւ սեմինարների մասնակցում:

Հաշմանդամ մարդիկ Հայաստանում չեն կարողանում իրենց համար հարմար աշխատանք գտնել, հաճախ ոչ այն պատճառով, որ նման աշխատանք չկա, այլ նրա համար, որ գործատուները չեն ցանկանում մի երկու կոպեկ ավելի ծախսել եւ այդ մարդկանց համար հարմարեցված միջավայր ստեղծել: Կան բացառություններ, երբ հաշմանդամ անձն ինքն է հարմարվել եղած միջավայրին եւ գտել իր համար աշխատանք: Մնացած դեպքերում նրանք ստիպված են պարզապես նստել իրենց տանը եւ բավարարվել պետության տված կենսաթոշակով:



Գոյություն ունեցող կարծրատիպերին դեմ է գնացել տեսողության խնդիր ունեցող Նաիրա Կարապետյանը: Նա մասնագիտությամբ մերսող է: Հաճախորդներին սպասարկում է նրանց բնակարաններում, որոնք հիմնականում ծանոթ ու բարեկամ են: Շատ հաճախ էլ Նաիրան հաճախորդների համար անվարձահատույց է աշխատում: Նաիրան 1 տարեկան աղջիկ ունի՝ Նատալին, նրան խնամում է ինքնուրույն: «Դժվարություններ ունեինք, ամուսինս գնացել է արտերկիր՝ գումար աշխատելու, ես երեխայիս հետ այստեղ եմ: Ինքնուրույն մարդ եմ, տեղաշարժվում եմ ինքնուրույն, տրանսպորտից եմ օգտվում, ամեն տեղ գնում եմ, սակայն դա ունի իր դժվարությունները, քանի որ Հայաստանում չկա համապատասխան միջավայր ու հաշմանդամների համար վերականգնողական կենտրոն: Հայաստանը հարմարեցված չէ հաշմանդամի համար»,- «Առավոտի» հետ զրույցում պատմեց Նաիրան:

Նաիրային մինչեւ 7 տարեկան դառնալը մեծացրել է տատիկը, դրանից հետո կույրերի համար նախատեսված գիշերօթիկում է սովորել: Ասում է, որ երբ դպրոցն ավարտելիս է եղել, հայրն իր անունով բնակարան է ստացել եւ այն վաճառել, իբրեւ թե 2 տուն գնելու պատճառաբանությամբ, սակայն. «Վաճառեց, խաբեց ինձ, թողեց փողոցում: Երբ դպրոցից դուրս եկա, որտեղ ասես սովորեցի՝ ծերանոցում էի մնում, առանց աշխատավարձի աշխատում եւ այլն, մինչեւ որ դիմեցի դատարան եւ իրավունքներս վերականգնեցի: Այդ փորձություններն ինձ ահագին բան տվեցին, քանի որ, եթե դրանց միջով չանցնեի, ես էլ հիմա տանը բազմոցին նստած կլինեի: Դժվարությունները մեզ համար են, եթե փախչենք, ո՞վ է մեր փոխարեն հաղթահարելու»:

Նաիրան մասնակցել է Լեհաստանի կույրերի միավորման եւ «Հանգրվան» բարեգործական հ/կ-ի կազմակերպած սեմինարներին եւ եկել այն եզրակացության, որ այն դժվարությունները, որ մենք ունենք այսօր, Լեհաստանում արդեն վաղուց հաղթահարել են. «Այնտեղ չտեսնող մարդը բացարձակ ինքնուրույն է բոլոր հարցերում: Լեհերը պատրաստ են իրենց փորձով կիսվել մեզ հետ, նույնիսկ տիֆլո (հատուկ) մանկավարժներ են պատրաստել, նրանց համար սեմինարներ են անցկացրել, որոնցից հետո նրանք արդեն կարող են օգնել չտեսնողին, ինքնուրույն տեղաշարժվելուց մինչեւ կարտոֆիլ մաքրելն ու կոսմետիկա օգտագործելը: Սեմինարների ժամանակ մեզ սպիտակ ձեռնափայտ են նվիրել, որի միջոցով կարող են կույր մարդիկ տեղեկանալ, թե իրենց շրջապատում ինչ կա՝ աստիճան է, անկյուն է, մուտք է եւ այլն: Ես սովորել եմ ավելի շատ տեսական գիտելիքներ, քանի որ մեր երկրում պայմաններ չկան հարմարեցված: Երեխայի խնամքի հետ կապված գիտելիքներ եմ ստացել, բավականին բան եմ վերցրել: Խորհուրդներ են տվել, թե ինչպես անել, որ չոչ անող երեխայի տեղն իմանաս, եղունգներն ինչպես մշակես եւ այլն: Նրանք այստեղ նախատեսում են վերականգնողական կենտրոն բացել, սակայն պետական ոչ մի աջակցություն չկա այս առումով»: Նաիրան դժգոհ է, որ պետությունը կույրերի բազմաթիվ կազմակերպություններին տվել է տարածք, իսկ «Հանգրվան» ընկերությանը չի տալիս. «Կույրերի միավորումը, օրինակ, իր տարածքները տալիս է աղանդավորներին՝ վարձով, իսկ կույրերը մեկ սենյակում դոմինո են նստում խաղում: Իսկ կյանքն այնքան կարճ է եւ ժամանակն այնքան թանկ, որ չարժե դոմինո խաղալու վրա վատնել այն»:

Լեհաստանի կույրերի միավորման հետ հայկական «Հանգրվան» բարեգործական հ/կ-ն է համագործակցում: Եվ տարածք ձեռք բերելու խնդիրը հենց իրենցն է: Հ/կ-ի ծրագրերի կոորդինատոր Տիգրան Վարդանյանի ներկայացմամբ, ցանկացած հիմնադրամ, որ ցանկանում է օգնել իրենց, ասում է, որ պետք է տարածք ունենան. «Դեռեւս չունենք այդ հարցում նվաճումներ, քաղաքապետերին ենք դիմել, կուսակցություններին, ոչ մի պատասխան դեռ չենք ստացել: Եթե ունենայինք կենտրոն, մենք ավելի շատ բան կկարողանայինք սովորեցնել կույրերին: Հիմա մենք ավելի շատ սովորեցնում ենք ինքնուրույն տեղաշարժվել, հիգիենային հետեւել, իսկ եթե տարածք ունենայինք, կկարողանայինք նրանց վերապատրաստել եւ անգամ հնարավոր է՝ աշխատանքի տեղավորեինք»: Նա շեշտեց, որ հարեւան Վրաստանում պետության կողմից անվարձահատույց տրված նման կենտրոն արդեն կա:

Տիգրան Վարդանյանի խոսքերով, իրենք չեն հաշվում, թե քանի շահառու ունեն, քանի որ չունեն չափորոշիչներ, ըստ որոնց են որոշում՝ ընդունում են կամ մերժում. «Մեր շահառուների մեծ մասը 18-45 տարեկան են, բայց եթե փոքր են կամ մեծ եւ դիմում են մեզ, մենք չենք մերժում»: Մեր այն հարցին, թե ինչո՞ւ է հատկապես Լեհաստանի փորձը վերցվել, նա պատասխանեց. «Նրանք մեր երկրի նման դժվարություններ են ունեցել այս հարցում: Իսկ հիմա Վարշավայում կույրերը կարողանում են հանգիստ տրանսպորտից օգտվել»:

ԱՆՈՒՇ ԽԵՉՈՅԱՆ

## «Ինտերնետ միասին» գինը կամ կիջնի, կամ կբարձրանա

Orange բջջային օպերատորը «Ինտերնետ միասին» նոր ծառայություն է մատուցում եւ իր կայքէջում մանրամասնում, թե դա ինչ է իրենից ներկայացնում: Ընկերության հաղորդագրության մեջ մասնավորապես նշված է, որ ինտերնետի բաժանորդներն այսուհետ կարող են կիսվել իրենց ինտերնետով մտերիմների հետ եւ միասին օգտագործել գերարագ ինտերնետի փաթեթը, կարող են ստանալ 1 կամ 2 լրացուցիչ SIM քարտ եւ այլն: Նշված են նաեւ ծառայության ամսավճարը եւ այլ մանրամասներ: Եվ հաղորդագրության վերջում ընկերությունը սպառողներին տեղեկացնում է, որ ծառայության ամսավճարը հետագայում կարող է փոփոխվել, սակայն չի նշվում, թե ինչպես է փոփոխվելու՝ թանկանալո՞ւ է, թե՞ հակառակը:

Օրերս «Առավոտին» են դիմել տասնյակ բաժանորդներ՝ մտավախություն ունենալով, որ օգտվելով այդ ծառայությունից, հնարավոր է՝ «անակնկալի» գան. «Կարող է սկսենք օգտվել այդ ծառայությունից, մի օր էլ ասեն, որ գինը կրկնակի թանկացել է: Նաեւ չեն մանրամասնել, որ, եթե ասենք, բաժանորդը, համաձայն չլինելով, որոշի դադարեցնել պայմանագիրը, պետք է գումար վճարի՞, թե՞ ոչ: Սկզբում գայթակղիչ պայմաններ են առաջարկում, վերջում տհաճ անակնկալ անում»:

Այս առնչությամբ Orange ընկերությունից «Առավոտին» այսպես պարզաբանեցին. «Ինտերնետ միասին» ծառայության ամսավճարը հետագայում կարող է փոփոխվել, ինչը նշանակում է, որ այն կարող է բարձրանալ կամ իջնել՝ կախված տարբեր գործոններից, ինչպես շուկայում ցանկացած ապրանքի կամ ծառայության գին: Ամսավճարի ցանկացած տեսակի փոփոխության մասին բաժանորդները կտեղեկացվեն նախապես: Եթե ամսավճարի փոփոխությունից հետո բաժանորդը ցանկալի չհամարի ծառայությունից օգտվելը, ապա կարող է վերադարձնել վարձակալված մոդեմը եւ դադարեցնել «Ինտերնետ միասին» ծառայությունը առանց որեւէ հավելյալ վճարումների եւ պարտավորությունների՝ վճարելով միայն մինչեւ դադարեցման պահը կուտակված պարտքը»:

Ն. Բ.

## Գնաճի համար միրգն ու բանջարեղե՞նն են մեղավոր

Նախորդ տարվա դեկտեմբերին, նոյեմբեր ամսվա համեմատությամբ, պարենային ապրանքների գները 4.8%-ով աճել են: Երեկ «Հենարան» ակումբում նման տվյալներ հայտնեց ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գների վիճակագրության եւ միջազգային համադրումների բաժնի պետ Գուրգեն Մարտիրոսյանը: Նա ասուլիս էր հրավիրել՝ ներկայացնելու 2011-ի գնագոյացման եւ գնաճի ցուցանիշները: Պարոն Մարտիրոսյանը գնաճը պայմանավորեց մրգի, բանջարեղենի եւ կարտոֆիլի թանկացմամբ: Նախորդ տարվա նոյեմբերի համեմատությամբ՝ դեկտեմբերին ծաղկակաղամբի գինը 1.5%-ով բարձրացել է, սունկը 6.8%-ով է թանկացել, կարտոֆիլի գինն էլ բարձրացել է 2.3%-ով, մսամթերքի գներն աճել են 0.2-3.5%-ով: Պարոն Մարտիրոսյանի տվյալներով, գնանկում է նկատվել սխտորի՝ 1.7%, եւ շաքարավազի՝ 1.2% մասով: Բանախոսը նշեց, որ նախորդ տարվա համեմատությամբ՝ հաշվարկի գործակիցները փոփոխվել են, եւ կենսապահովման նվազագույն զամբյուղի ցուցանիշները կարող են համադրվել միայն 2010թ. 4-րդ եռամսյակի հետ:

Սեփ. լր.

# Կինը տաք հագուստ, վառելիք ու սնունդ է ուզում

## Որպեսզի կարողանա ձմռան այս ցրտերին դիմանալ

Տիկին Գոհարն ամեն անգամ տուն մտնելիս ու դուրս գալիս Աստծուն փառք է տալիս, որ բարեհաջող իջավ-բարձրացավ: Փայտյա աստիճաններն այնքան փտած են, որ ամեն վայրկյան կարող են փլվել: Գոհար Գեւորգյանի պատմելով՝ մի կերպ կարողանում է հոգալ օրվա հացի խնդիրը եւ ոչ մի կոպեկ լրացուցիչ երբեք չի ունենում, որպեսզի կարողանա աստիճաններն ու տունը վերանորոգել: Նա ուզում է աշխատել, բայց, ինչպես ինքն է պատմում, տարիքով պայմանավորված՝ նրան հրաժարվում են աշխատանք տալ: «Մեկ-մեկ կանչում էին՝ տուն էի մաքրում, պատուհաններ լվանում, իսկ այս սեզոնին այլեւս նման աշխատանքի պահանջ չկա: Որքան փորձում եմ այլ աշխատանքներ գտնել՝ չի ստացվում: Իմ տարիքի կանանց համար աշխատանք գտնելը շա՜տ բարդ է, անգամ հավաքարարի ազատ տեղեր այլեւս չկան»: Տիկին Գոհարի փոքրիկ ընտանիքի միակ եկամտի աղբյուրը որդու օրական 1000 դրամն է, որը վաստակում է պահակություն անելով: Արհեստավորների թիվ 47 հասցեում գտնվող Գ. Գեւորգյանի տանը նույնիսկ տարրական պայմաններ չկան՝ սեփական հիգիենային հետեւելու համար: Ձմռան այս ցրտին էլ տաքանում են դրսից ու աղբամաններից հավաքած փալաս-փուլուսներ ու ստվարաթուղթ վառելով. «Տանը ջրի խողովակներ էլ չկան, օրը մի քանի անգամ ջուր եմ կրում: Ժամանակին դիմել էի «Երեւանջրին», սակայն ինձ վստահեցրին, որ ինքս պետք է 300 մետր փոս փորեմ եւ ինքս էլ խողովակները քաշեմ: Ջրի հարցը լուծելու համար նույնիսկ դիմել եմ առաջին տիկին Ռիտա Սարգսյանին, բայց ոչ մի պատասխան էլ չեմ ստացել: Ճարահատյալ եմ դիմում այս քայլին, բայց խնդրում եմ՝ ով ինչով կարող է՝ թող օգնի: Ես տաք հագուստի, սննդի, առաջին անհրաժեշտության կենցաղային եւ տնտեսական իրերի կարիք ունեմ: Հնարավոր է՝ որեւէ մեկը, օրինակ՝ վարագույր, ջրի խողովակ կամ փական կարողանա տրամադրել ինձ: Կամ գուցե ինչ-որ մեկն ինձ մշտական աշխատանքի հրավիրի: Այլեւս անհնար է այսպես ապրել»:



ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 12.01.2012

# Լուսաձորում ներդրված մեծ փողերն անարդյունավետ են ծախսվել

## Ջրագիծը վթարվել է, մշակույթի տան առաստաղն էլ՝ ճաքճքել

Լուսաձոր համայնքի բնակիչներն «Առավոտին» բողոքել էին, որ իրենց համայնքում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի եւ այլ կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերն ու կատարված մեծ ներդրումներն անարդյունավետ են եղել: Լուսաձոր այցելության ժամանակ զրուցեցինք համայնքապետ Սուրեն Քոչարյանի, համայնքապետարանի աշխատողների եւ գյուղի բնակիչների հետ: Ըստ Ս. Քոչարյանի, Լուսաձորում 2008-2009թթ. ՄԱԿ-ի զարգացման ծրագրով 83 միլիոն դրամով կառուցվել է խմելու ջրագիծ, 6 կմ երկարությամբ ներքին ցանց: Այդ ջրագծով մոտակա անտառից ջուրը ինքնահոս իջնում է ներքեւ, պոմպի միջոցով մղվում դեպի 100 տոննանոց 2 ջրամբար, որտեղից էլ կատարվում է առանձնատների սնուցումը: Գյուղապետն ասաց, որ Լուսաձորի տարածքում մի քանի տեղ ջրագծի վթարներ կան, ինչի հետեւանքով փոքր գյուղի կեսը՝ շուրջ 80 ընտանիք, ներկայումս չի կարողանում օգտվել այդ ջրագծից: Ներքին ցանցում, որոշ տեղերում ջրի պլաստմասսե խողովակներն անցնում են գետնի երեսով, ցրտից այդ խողովակները շարքից դուրս են գալիս: Գյուղացիների մի մասն իրենց տեղադրած ջրի հաշվիչները հանել են, որպեսզի դրանք էլ ցրտի պատճառով շարքից դուրս չգան: Համայնքապետարանի պատասխանատուների ներկայացմամբ՝ 83 միլիոն դրամով կառուցված ջրագիծը սպասարկող բանվոր չկա, եւ գյուղապետն անձամբ է կատարում փականների բացում-փակումը: Համայնքի ղեկավարն ասաց, որ մտադիր են 2 տարի առաջ կառուցված ջրագիծը փոխանցել «Հայջրմուղկոյուղի» ընկերության հաշվեկշիռ: ՄԱԿ-ի զարգացման ծրագրով՝ Իտալիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ, 21 միլիոն դրամով Լուսաձորում վերանորոգվել է մշակույթի տունը: Միհարկանի կառույցի նորոգման համար դա քիչ գումար չէ, եթե հաշվի առնենք, որ 2005թ. ծագումով Կոթիից՝ գործարար Յուրա Հարությունյանն այդտեղ խաղասրահ է կահավորել: Վերանորոգված մշակույթի տան բացումը կատարվեց մեծ շուքով՝ 2008թ. դեկտեմբերի 2-ին: Հայաստանում Իտալիայի դեսպան Մասիմո Լավեցցո Կասինելին մշակույթի տան առջեւի հրապարակում հանդիսավոր առիթով պարի շրջան մտավ: Սակայն եթե հիմա հարգարժան Կասինելին տեսնի մշակույթի տան դահլիճի խոնավ առաստաղը, հաստատ պարելու ցանկությունը կկորչի: Դահլիճի առաստաղը ջրի արտահոսքից վնասվել է: Լուսաձորի խմելու ջրագիծը կառուցել, մշակույթի տունը նորոգել է նույն կազմակերպությունը՝ «Գավառի համար մեկ շինվարչություն» ԲԲԸ-ն, որի տնօրենը Հրայր Մնացականյանն է: Գյուղապետ Սուրեն Քոչարյանից տեղեկացանք, որ Լուսաձորում շինարարական աշխատանքները ղեկավարել է Հրայրի եղբայր Հովիկը:





ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## Ոստիկանը, վրացին եւ եւս 4-ը Ազգային գրադարանից գողացել են

ՀՀ հատուկ քննչական ծառայությունից երեկ տեղեկացանք, որ իրենց մոտ քննվում է Հայաստանի ազգային գրադարանից եւ Երեւանի պետական համալսարանի գրադարանից 2010-2011թթ. ընթացքում առանձնապես խոշոր չափերի հասնող՝ մի քանի միլիոն դրամ արժողության գրքերի գողություն եւ յուրացում կատարելու վերաբերյալ քրեական գործը:

Ըստ նախաքննության մարմնի՝ Ազգային գրադարանի շենքի պահպանությունն իրականացնող՝ ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ ՀԶՊ գնդի ոստիկան Ե. Ղամբարյանն ու Վրաստանի քաղաքացի Վ. Ազարիաշվիլին, նախնական համաձայնության գալով, 2010-2011թթ. պարբերաբար մուտք են գործել «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի գրապահոց եւ հափշտակել շուրջ 150 միավոր տարբեր գրքեր:

2011թ. դեկտեմբերի 26-ին հանցավոր խումբը վնասազերծվել է, եւ ՊՈԱԿ-ի շենք ապօրինի մուտք գործելու փորձ կատարած 4 անձինք անմիջապես բերման են ենթարկվել: Հատուկ քննչական ծառայությունը տեղեկացնում է, որ ապացույցներ են ձեռք բերվել նաեւ առ այն, որ Վրաստանի քաղաքացի Վ. Ազարիաշվիլիի դրդմամբ Երեւանի պետական համալսարանի գրադարանի բաժնի վարիչը շուրջ 19 միավոր տարբեր գրքեր է վաճառել նրան, իսկ ստացած գումարը տնօրինել անձնական նպատակներով:

Քրեական գործով մեղադրանք է առաջադրվել 6 անձի՝ բաժնի վարիչը մեղադրվում է յուրացում, իսկ մնացած 5-ը, նրանց թվում՝ Վրաստանի քաղաքացի Վ. Ազարիաշվիլին եւ ոստիկանության երկու աշխատակիցներ՝ Ե. եւ Դ. Ղամբարյանները, ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ուսանող Վ. Ե.-ն եւ քաղաքացի Կ. Հովհաննիսյանը մեղադրվում են գողություն եւ գողության փորձ կատարելու մեջ:

# Բժիշկներն առողջացնում են Մեծ Շենը

## Նրանք ոչ միայն պատերազմի, այլեւ խաղաղ ժամանակ են գյուղի կողքին

Նոր տարին սովորաբար նույնացվում է նոր սպասումների, ակնկալիքների ու նվիրական ցանկությունների իրականացման հետ: Իսկ եթե տարին սկսվում է լավ նորություններով, ապա հույսերը կրկնապատկվում են՝ տարին լավ է լինելու: Այս օրերին նման մթնոլորտ էր տիրում Մարտակերտի Մեծ Շեն գյուղում, որի փոքրիկ անկյունի բնակիչները սեւ վիշապի տարին նշանավորեցին նոր մանկապարտեզ հաճախելու հնարավորությամբ: Բարերարներ, ՀՀ վաստակավոր բժիշկներ Կարլեն եւ Սառա Եսայանների հովանավորությամբ հունվարից սկսեց գործել Մեծ Շենի մանկապարտեզը: Սա, թերեւս, միակ հանրային նշանակության հաստատությունն էր, որի կարիքը հիրավի այս գյուղն ուներ:





Ծնունդով մարտակերտցի, Եվրոպայի ակադեմիայի բնական գիտությունների անդամ, Նանսենի ոսկյա հուշամեդալի արժանացած Սառա Եսայանը աշխատում է մայրաքաղաքի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում: Մեծ Շենում ծնված Կարլեն Եսայանը, որը «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ-ի ԲՓԸ նախագահն է, ակադեմիկոս, իր մարդասիրական գործունեության համար ԼՂՀ նախագահի հրամանագրով պարգեւատրվել էր «Երախտագիտություն» մեդալով:

Մեծ Շենում գտնվելու օրերին այցելեցինք գյուղի նորաբաց դպրոցը: Դպրոցի բացումը տեղի էր ունեցել անցյալ տարվա օգոստոսի 31-ին: Այս բժիշկների աջակցության շնորհիվ ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները ուսումնառության համար: Դպրոցն ապահովված էր համակարգչով, անհրաժեշտ տեխնիկայով եւ որ ամենակարեւորն է՝ ջեռուցման համակարգով, կաթսայատնով: Ի դեպ, նկատի ունենալով համայնքի առանձնահատկությունը՝ ջեռուցումն իրականացվում է փայտանյութով: Դպրոցն անվանակոչվել է Կարլեն Եսայանի անունով, ում կիսանդրու բացումը տեղի էր ունեցել հենց դպրոցի բակում:

Անցյալ տարի օծվել է նաեւ գյուղի Սուրբ Գեւորգ եկեղեցին: Եկեղեցու պատին գրված էր. «Ի հայրապետության Գարեգին Բ կաթողիկոսի եւ առաջնորդությամբ Պարգեւ արքեպիսկոպոսի Կարլեն եւ Սառա Եսայանների բարերարությամբ կամովն Աստծոյ կառուցվեց Սուրբ Գեւորգ եկեղեցիս ի բարեխոսություն Թաբաղանց տոհմի 2011թ.»:

Եկեղեցու անմիջական հարեւանությամբ վեր էր խոյանում ինչպես հայրենական պատերազմի, այնպես էլ Արցախի ազգային ազատագրական պայքարին իրենց կյանքը նվիրաբերած մեծշենցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը:

Եսայանների նախաձեռնությամբ կառուցվել էր մանկական խաղահրապարակ, իսկ դպրոցականների համար՝ լողավազան դպրոցի բակում եւ մարզադաշտ:

Մեծ Շենում տեղեկացանք, որ գյուղապետարանի համար էլ կառուցվել է նոր վարչական շենք: Գյուղը կառավարելու խնդիր, իրոք, ունի, քանզի բարերարները մտածել են ոչ միայն գյուղի բնականոն կյանքն ապահովելու համար կենսական նշանակություն ունեցող հասարակական, մշակութային եւ կրթական հաստատությունների կառուցման մասին, այլ աշխատատեղեր ստեղծելու մասին էլ: Բժիշկները գյուղին նվիրել են 2 արտադրամաս՝ քարի մշակման եւ մակարոնեղենի արտադրության: Քարերի մշակման սարքավորումը Մեծ Շեն էր տեղափոխվել ԱՄՆ-ից, իսկ մակարոնեղենինը՝ Իտալիայից, որն, ի դեպ, ժամում կարող է արտադրել 60 կգ մակարոն: Այդ սարքավորումները տեր եւ տիկին Եսայանները նվիրել են համայնքին՝ առանց շահույթ հետապնդելու:

Գյուղաբնակները ասացին, որ տարիներ շարունակ բարերարները որպես խրախուսանք 1000-ական ԱՄՆ դոլարին համարժեք դրամ են տրամադրել 1-ին զավակ ունենալու համար, 2.000՝ 2-րդ երեխայի համար եւ այդպես շարունակ: Բժիշկները մտադիր են դրամական պարգեւ տրամադրել միայն մի քանի երեխա ունեցող ընտանիքներին:

Նկատենք, որ այս գյուղը բարեկարգվել եւ վերածնվել է միայն մեկ բարերարի՝ տվյալ պարագայում Եսայանների ընտանիքի շնորհիվ, իսկ քանի նման գյուղեր կարող են զարգանալ, եթե ամեն մի նման համայնքի հոգս փորձեն ստանձնել հայրենասիրությունը կենաց դարձրած գործարարները:

Մեծ Շենում դրա պատասխանն էլ կար. բժիշկները պատերազմի ժամանակ մեր մարտիկների կողքին եղան, բնական է, խաղաղության պայմաններում՝ գյուղի կողքին:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ
Մարտակերտ-Երեւան

# Գեներալների թեման՝ արցախյան «սոուսով»

## Իսկ նրանց աղջիկները ընդամենը պատրվակ են



«Հայրի՞կ, գրի՞ր, որ դու նրա եղբայրն ես...» ...Գեներալը շոյեց աղջկա մազերը, խորհեց եւ կարճատեւ լռությունից հետո ասաց. «Ոչ, Մարգարիտ, այդպիսի կնոջը չի կարելի խաբել, գրենք նրան ճշմարտությունը»:

Այս տողերը ոչ թե «Հ1»-ով ցուցադրվող «Գեներալի աղջիկը» նոր հեռուստասերիալից են, այլ Հրաչյա Քոչարի «Գեներալի քույրը» ստեղծագործությունից, որը ժամանակին մեծ ժողովրդականություն էր վայելում, իսկ գեներալները պատվի, հարգանքի ու ողջախոհության մարմնացում էին:

Վերջին շրջանում սկսել են ֆիլմեր ու հեռուստասերիալներ նկարել նոր գեներալների ու Արցախյան պատերազմի թեմայով: Դրանցից մեկի մասին ՀՀՌԽ նախագահ Ալեքսան Հարությունյանը ազդարարեց վերջերս կայացած ասուլիսում, հույս հայտնելով, որ սերիալների որակը կբարձրանա: Ապա անդրադառնալով նոր հեռուստասերիալին՝ «Գեներալի աղջկան», հիշեցրեց, որ դեպքերը զարգանում են Արցախյան պատերազմի ժամանակաշրջանում եւ շարունակվում մինչեւ մեր օրերը: «Գեներալի աղջիկը» հեռուստասերիալի վրա աշխատել է «Աննայի» ստեղծագործական կազմը: Սրանից հետեւում է, որ այս սերիալն էլ, ամենայն հավանականությամբ, լալկանություն եւ ողբ կբերի եթեր: Մինչդեռ անձնվեր հայրենասիրության համար պարտադիր չէ սերիալներում մահ ու արյուն հրամցնել, սերը ներկայացնելիս էլ սեռական ակտը՝ բոլոր մանրամասնություններով: «Գեներալի աղջիկը» սերիալում նաեւ Ղարաբաղի բարբառ կա, որը խիստ նեղացնում է Արցախի համար մղված համահայկական ազատամարտի սահմանները: Չէ՞ որ այդ հաղթանակի մեջ իր ներդրումն ունի երեւանցին, վանաձորցին, գորիսեցին, սփյուռքահայը, բոլորը... մանավանդ՝ Հայաստանի սահմանամերձ շատ գյուղեր մինչեւ օրս էլ ապրում են ադրբեջանցի դիպուկահարի «թիրախի» տակ: Վերջերս Հայաստանի գյուղերից մեկում թաղման արարողությունը կիսատ են թողել՝ ադրբեջանցիների կրակոցների պատճառով...

Չգիտենք, թե ինչ ճակատագիր կունենա «Գեներալի աղջիկը» սերիալի աղջիկը, ենթադրում ենք, որ նրան էլ ինչ-որ մեկը անպայման կսիրահարվի. բարձրաստիճան զինվորականների դուստրերին սիրահարվելը մոդայիկ է դարձել հայկական սերիալներում եւ իրական կյանքում («Բանակում», «Ես եմ» եւ այլն):

Թերեւս մխիթարական է այն, որ հայկական սերիալներում սկսել են պրոֆեսիոնալ դերասաններին ներգրավել, տվյալ դեպքում՝ Արմեն եւ Աննա Էլբակյաններ, «Որոգայթում»՝ Հարություն Մովսիսյան, Գարիկ Չեփչյան, «Եզրագծից այն կողմում»՝ Արտաշես Ալեքսանյան եւ ուրիշներ: Բայց երբեմն պրոֆեսիոնալներն էլ չեն նայվում, «իրենց ափսեում» չեն լինում, ինչպես, օրինակ, Գուժ Մանուկյանը՝ «Որոգայթում», Տիգրան Ներսիսյանը՝ «Հանուն սիրո» սերիալում:

Հայրենական պատերազմի ժամանակ ռազմի գրականություն, կինո, երաժշտություն, ընդհանրապես ռազմական ոգին ու հայրենասիրությունը խթանող մշակույթ ստեղծվեց, ԽՍՀՄ-ը նույնը արեց նաեւ աֆղանական պատերազմի ժամանակ, չնայած վերջին պարագայում գերտերությունը ագրեսոր էր: Ցավոք, Հայաստանում Արցախյան ազատամարտը արվեստով ներկայացնելը կարծես դուրս է մնացել երկրի մշակութային քաղաքականությունից ու քաղաքականությունից՝ ընդհանրապես: Ապացույցներից մեկը դիլետանտների մակարդակով ֆիլմեր նկարահանելն է այդ թեմայով: Ախր կինոն հզոր քարոզչամիջոց է...

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Էլիտարը, կամերայինը եւ մենք

## Ա. Խաչատրյանի անվան դաշնամուրային տրիոն առանց պետական կարգավիճակի անում է ավելին

Արեւմուտքում թագավորական պալատներում եւ նախագահական ընդունելությունների ժամանակ ամենաերաժշտական ֆորմաները (տրիո, կվարտետ, կվինտետից մինչեւ նվագախումբ) կամերային կազմերն են: «Առավոտի» հետ զրուցած աշխարհահռչակ երաժիշտներն առանց բացառության կարծես իրենց պարտադիր մասնակցությունն են ունենում կամերային որեւէ կազմում: Մինչդեռ մեզանում կամերային երաժշտության հանդեպ նման լուրջ վերաբերմունք է դրսեւորվում տխուր արարողությունների ժամանակ: Խիստ հազվադեպ են հանդիպում ուրախության տոներն ու ընդունելությունները (ներառյալ պետականը)՝ կամերային երաժշտության մասնակցությամբ: Հայաստանում կամերային պետական կոլեկտիվները 4-ն են՝ Կոմիտասի եւ Խաչատրյանի անվան լարային քառյակները, «Շելլ» դաշնամուրային տրիոն եւ Հայաստանի պետական կամերային նվագախումբը (ՀՊԿՆ): Նշված կոլեկտիվներից անցյալ տարի հաճախ հանդիպում էինք Կոմիտասի անվան լարային քառյակի, հազվադեպ էլ՝ ՀՊԿՆ-ի հայտագրերին:

Մշտապես ականջալուր էինք լինում դեռեւս պետական կարգավիճակ չունեցող, 1999թ. հիմնադրված Խաչատրյանի անվան դաշնամուրային տրիոյի գործունեությանը, որի աշխարհագրությունը միայն 2011թ. ընթացքում Երեւանից, մարզերից, Արցախից ձգվեց՝ հասնելով Ռուսաստան, Վրաստան, Մոլդովա, Ավստրալիա:

2011թ. տրիոյի կողմից ստեղծված հիմնադրամի օժանդակությամբ Վանաձորի Ստ. Զորաշյանի անվան արվեստի դպրոցում բացվեց թավջութակի դասարան եւ այլն: Տրիոյի կազմում են դաշնակահարուհի, Երեւանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Արմինե Գրիգորյանը, ջութակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Կարեն Շահգալդյանը եւ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի թավջութակահարների խմբի փոխկոնցերտմայստեր Կարեն Քոչարյանը:

«Առավոտը» զրուցեց տրիոյի դաշնակահար Արմինե Գրիգորյանի հետ, քանի որ այս տարին հոբելյանական է երաժշտի համար. լրանում է նրա բեմական գործունեության 20-ամյակը: Մեր զրուցակիցը ուրախությամբ նշեց, որ կոմպոզիտորները վերջին շրջանում շատ են անդրադառնում կամերային ժանրին, նշելով միջին, ավագ եւ երիտասարդ սերնդի հայ կոմպոզիտորների անուններ: Նա հիշեց հատկապես անցյալ տարի Ռիգայում կայացած երեկոն. «Արամ Խաչատրյանի ուսանող, այժմ հայտնի կոմպոզիտոր Պելեցիսը իր կվարտետի պրեմիերան վստահեց մեզ, հրավիրելով նաեւ ալտահար Մաքսիմ Նովիկովին»: Տիկին Գրիգորյանը շդժգոհեց հանդիսատեսի պակասից, ցանկություն հայտնելով, որ էլ ավելի պետք է ավելացնել կամերային համերգների թիվը: Խոսելով հիմնադրամի գործունեության մասին, ասաց. «Յոթ երիտասարդ երաժիշտների կրթաթոշակ է հոգում հիմնադրամը: Գործընկերներիս հետ հաճախ ենք լինում մարզերում՝ վարպետության դասեր անցկացնելու նպատակով, շուրջ 3 տարի է՝ գործում է «Երաժշտական սրահ անակնկալ» նախագիծը, որտեղ մրցույթով անցնող պատանի երաժիշտները հանդես են գալիս մեզ հետ: Սա էլ կամերային երաժշտության պրոպագանդման միջոց է»: Հետաքրքրվեցինք, թե քանի՞ անգամ են, օրինակ, մասնակցել պաշտոնական ընդունելությունների: Պարզվեց՝ ընդամենը մեկ անգամ: Եվ քանի որ Ա. Գրիգորյանը Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրենն է, հարցրինք, թե ինչո՞ւ չի օգտագործում «վերեւների» հետ շփվելու իր հնարավորությունը՝ տրիոյին պետական կարգավիճակ շնորհելու համար: Դաշնակահարուհին ընդամենը հայտնեց հետեւյալը. «Մանավանդ երբ արտերկրում ես եւ հայտարարվում է՝ պետական կոլեկտիվ, քեզ ավելի ամուր ես զգում, կարծես այդ պահին պետությունը մեջքիդ է կանգնած»: Իսկ թե որտեղի՞ց է «սնվում» հիմնադրամը, Ա. Գրիգորյանն ասաց. «Բարերարներն աշխարհում ազատվում են հազարումի հարկերից: Համոզված եմ, երբ վերանայվի օրենքի այս մասը, մեծ թվով գործարարներ կկանգնեն ոչ միայն մեր, այլեւ մշակույթի կողքին՝ ընդհանրապես»:



Դաշնակահարուհի Արմինե Գրիգորյանը հովանավորչության մասին օրենք է ակնկալում:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Հայաստանցի ցեղասպանագետները որեւէ ներդրում չունե՞ն

ARMACAD գիտական ցանցի հիմնադիր Խաչիկ Գեւորգյանը հաղորդագրություն է տարածել այն մասին, որ ցեղասպանագիտական հարցերին նվիրված՝ աշխարհում գոյություն ունի 2 ինդեքսավորվող եւ գրախոսվող միջազգային պարբերական: Դրանք են՝ Journal of Genocide Research եւ Holocaust and Genocide Studies-ը:

«Հավանաբար քչերի մտքով կանցնի, որ բազմաթիվ ցեղասպանագետներ ունեցող Հայաստանի եւ ոչ մի ներկայացուցիչ այս պարբերականներում տպագրած գիտական հոդված չունի: Սա կամ խոսում է ոլորտի կատարյալ բարձիթողի վիճակի մասին, կամ հայաստանցի ցեղասպանագետների՝ միջազգային գիտական հոսքին բացարձակ ինտեգրված չլինելու մասին: Հայտնի է, որ միջազգային ասպարեզում երկրի գիտական վարկանիշն ավելանում է տվյալ երկրից միջազգային պարբերականներում տպագրության ներկայացված հոդվածների քանակով նաեւ: Նշանակում է հայաստանցի ցեղասպանագետները որեւէ ներդրում չեն ունեցել մեր երկրի միջազգային գիտական վարկանիշի ավելացման գործում՝ առնվազն վերոնշյալ երկու միջազգային պարբերականներում հայաստանյան հեղինակների հոդվածների բացակայության առումով: Ես որպես հարկատու՝ խիստ մտահոգված եմ այս դառը իրողությամբ եւ տարակուսում եմ, թե ո՞ւր եւ հատկապես ո՞ւմ են տրվում իմ եւ այլոց վճարած հարկերը՝ որպես աշխատավարձ»,- մտահոգված է նա:



Պարոն Գեւորգյանը որոշ չափով իրավիճակը շտկելու, իսկ իրականում գիտություն-մասնավոր բիզնես կապը խթանելու եւ միջազգային պարբերականներում ՀՀ քաղաքացիների կողմից տպագրությունների առկայությունը կարեւորելու նպատակով խոստանում է տրամադրել 150,000 դրամ խրախուսավճար ՀՀ քաղաքացի այն գիտնականին, ով 2012 թվականի ընթացքում նշյալ ցեղասպանագիտական միջազգային պարբերականներից որեւէ մեկում կտպագրի առնվազն 5000 բառ պարունակող հոդված:

VivaCell MTS ՍՊՈՐՏԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Կանանց առաջնությունն ուժեղացել է դրսի ռեսուրսների հաշվին

Երեկ Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի կենտրոնական տանը մեկնարկեցին շախմատի ՀՀ բարձրագույն խմբի տղամարդկանց 72-րդ եւ կանանց 67-րդ առաջնությունները: Խաղարկվում են ոչ միայն հանրապետության չեմպիոնների ու մրցանակակիրների տիտղոսները, այլեւ երկու հավաքականների մեկական թափուր տեղերը:

Կանանց առաջնությունը նախորդներից տարբերվում է անհամեմատ ուժեղ կազմով, ինչը խոստանում է պայքարին լրացուցիչ սրություն հաղորդել: Հենց այդ պատճառով էլ «Առավոտը» զրուցեց կանանց առաջնության գլխավոր մրցավար, միջազգային կարգի մրցավար Արմեն Նիկողոսյանի հետ:

- Առաջին անգամ մեր երկրի կանանց առաջնությունում չորս գրոսմայստեր է հանդես գալիս: Այդ մասին ի՞նչ կասեք:

- Այո, Մարիա Կուրսովան, Եվգենյա Պոլուխանովան, Նելլի Աղինյանը եւ Նաիրա Մովսիսյանը: Եվ հենց դրա համար էլ այս առաջնությունը ՖԻԴԵ-ի սանդղակով կանանց 4-րդ դաս է ստացել, մինչդեռ նախկինում առավելագույնը եղել է առաջին կարգի: Բայց այդ ուժեղացումն առայժմ դրսից եկած Կուրսովայի եւ Պոլուխանովայի ներուժի հաշվին է: Չնայած հուսով ենք, որ ներքինն էլ շուտով կաշխատի:

- Եթե առաջնության մակարդակը բարձրացել է, մարզական նորմաներ է՞լ են սահմանված:

- Այո, կանանց միջազգային վարպետի, որը բավականին






բարձր է. 7,5 միավոր՝ 11 հնարավորից: Բացի այդ, առաջնության արդյունքներով որոշվելու է, թե ով է համալրելու մեր կանանց հավաքականի միակ թափուր տեղը: Ինչպես գիտեք, հինգ տեղերից չորսն անհատական վարկանիշներով զբաղեցնում են Էլինա Դանիելյանը, Մարիա Կուրսովան, Լիլիթ Մկրտչյանը եւ Լիլիթ Գալոյանը: Հինգերորդի անունը որոշվելու է այս առաջնությունում:

- Բայց եթե Կուրսովան հաղթի, ինչպե՞ս է ընտրվելու հավաքականի հինգերորդ անդամը:

- Այդ դեպքում թափուր տեղը կհամալրի մրցաշարային աղյուսակում երկրորդ տեղը գրաված շախմատիստուհին: Ի դեպ, Հայաստանի կանանց առաջնության հաղթողը կամ երկրորդ տեղը գրավողը իրավունք կստանա մասնակցելու Եվրոպայի կանանց անհատական առաջնությանը:

- Մենք սովոր ենք Նելլի Աղինյանին տեսնել մեր հավաքականի կազմում:

- Նելլին այս տարի դրությամբ հավաքականի կազմում չէ: Դրա համար էլ մասնակցում է այս առաջնությանը: Ակնկալվում է, որ պայքարը կընթանա հենց նրա ու Պոլուխանովայի միջեւ:

Տղամարդկանց առաջնությանը մասնակցում են 11 շախմատիստներ, որոնցից տասը գրոսմայստեր է, եւ միայն Կարեն Գրիգորյանն է միջազգային վարպետ, իսկ կանանց առաջնությանը՝ տասներկու շախմատիստ: Նրանք են:

Տղամարդիկ. Հրայր Սիմոնյան, Սամվել Տեր-Սահակյան, Ռոբերտ Հովհաննիսյան, Արտաշես Մինասյան, Ավետիք Գրիգորյան, Կարեն Գրիգորյան, Արման Փաշիկյան, Զավեն Անդրիասյան, Տիգրան Լ. Պետրոսյան, Լեւոն Բաբուջյան, Հրանտ Մելքումյան:

Կանայք. Մարիա Կուրսովա, Նելլի Աղինյան, Մարիա Գեւորգյան, Լիանա Աղաբեկյան, Նաիրա Մովսիսյան, Անահիտ Խառատյան, Եվգենյա Պոլուխանովա, Աննա Հայրապետյան, Շուշաննա Սարգսյան, Լիա Մարտիրոսյան, Հասմիկ Ղամբարյան, Նարինե Գասպարյան:

Առաջին տուրում գրանցված արդյունքները.

Տղամարդիկ՝

Ավետիք Գրիգորյան-Զավեն Անդրիասյան՝ 1/2

Ռոբերտ Հովհաննիսյան-Լեւոն Բաբուջյան՝ 1:0

Արտաշես Մինասյան-Տիգրան Պետրոսյան՝ 1:0

Սամվել Տեր Սահակյան-Հրանտ Մելքումյան՝ 1:0

Կարեն Գրիգորյան-Արման Փաշիկյան՝ 1:0:

Աղջիկներ՝

Մարիա Կուրսովա-Նարինե Գասպարյան՝ 1:0

Նելլի Աղինյան-Հասմիկ Ղամբարյան՝ 1:0

Մարիա Գեւորգյան-Լիա Մարտիրոսյան՝ 0:1

Լիանա Աղաբեկյան-Շուշաննա Սարգսյան՝ 1:0

Նաիրա Մովսիսյան-Աննա Հայրապետյան՝ 0:1

Անահիտ Խառատյան-Եվգենյա Պոլուխանովա՝ 1/2:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ԺԱՄԱՆՑ

# Կամասուտրան՝ մարդկանց մարմիններին

Մարդիկ տարբեր են, տարբեր են նաեւ նրանց նախասիրությունները, ապրելակերպը, զբաղմունքը, ցանկությունները: Ամեն մեկն ինքն է որոշում՝ ինչպես ապրել, հագնվել եւ այլն: Եվ յուրաքանչյուրն իր ձեւով է կյանքից հաճույք ստանում. մեկը՝ երգելով, մյուսը՝ պարելով, մեկ այլ մարդ էլ՝ նկարելով: Մեկին դուր է գալիս նկարել կտավի վրա, մյուսին՝ պատերի, իսկ, օրինակ, «Առավոտի» զրուցակցին՝ մարդկանց մարմինների:

«Ես այլասերված չեմ, բայց դաջվածքներ եմ անում մարմնի ամենաինտիմ հատվածներում, նույնիսկ այն մասերում, որը հայերի գիտակցության մեջ չի տեղավորվում»,- «Առավոտի» հետ զրույցում ասաց արդեն 17 տարի դաջվածքներով զբաղվող Ալեքսը, որը մասնագիտությամբ նկարիչ է: Ալեքսի խոսքով՝ իր նկարներն անմահ են, ավելի ճիշտ՝ մեռնում են միայն այն դեպքում, երբ մարդն է մեռնում. «Կտավի վրա նկարելիս նյարդերս հանգստանում են, իսկ մարմինների վրա աշխատելիս ոչ միայն հանգստանում եմ, այլեւ հպարտանում, բավարարվածության զգացումով լցվում, որովհետեւ բացի այն, որ իմ արած tattoo-ները գրեթե չեն կրկնվում, դրանք նաեւ անմահ են. կտավը գուցե թրջվի, փչանա, հնանա, գույները խամրեն, կամ մեկն անզգուշաբար վարվի դրանց հետ ու փչացնի, իսկ մարմինների դեպքում ոչինչ չի սպառնում: Նկարածս ցմահ է՝ մարդն այն կրում է իր մաշկի վրա, այն չի վախենում ոչ ջրից, ոչ եղանակից, ոչնչից»:



Ալեքսն ապրում ու աշխատում է Մոսկվայում, նա նախկինում տված իր հարցազրույցներից մեկում նշել էր, որ ուզում է Երեւանում «Tattoo» սրահ բացել, բայց փոշմանել էր, որովհետեւ հասկացել էր, որ իր աշխատանքներն այստեղ պահանջարկ չունեն: «Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ կկատարվի, երբ մեր համաքաղաքացիները նկատեն, որ փողոցով քայլող աղջկա կրծքին tattoo կա արված. երեւի այդ խեղճ աղջիկը տուն չի հասնի, ճամփին կմնա, կամ նրան կտանեն... Մեզ մոտ դեռ այդ կուլտուրան զարգացած չէ: Շատ քիչ առաջընթաց կա, Երեւանում հանդիպել եմ tattoo-ով աղջիկների: Չնայած՝ այստեղ եթե աղջիկները tattoo են անում, ապա մարմնի այն հատվածում են անում, որ դա չերեւա, ու միայն Քոբուլեթիում բացեն՝ ցույց տան, ինչն ինձ համար անհասկանալի է, կամ էլ այն աղջիկներն են անում, որոնք քիչ թե շատ առնչվում են show business-ին ու իրենց գլամուրային կերպար համարում: Բացի այդ՝ Հայաստանում միայն անշառ tattoo-ներ են անում»,- ժպտալով ասում է Ալեքսը, հավելելով, որ ինչպես Սովետական Հայաստանի տղամարդիկ էին պարտադիր խաչ, բաժակին փաթաթված օձ կամ աքլորի վերածված արծիվ դաջում, այժմ եւս այդ տիպի դաջվածքները հայերի համար մոդայիկ են համարվում:

Ալեքսն իր աշխատանքներում կարեւորում է ինքնատիպությունը: Նրա մեկնաբանմամբ՝ դաջվածք անողը պետք է կարողանա հասկանալ մարդու հոգին ու այնպիսի պատկեր նկարել, որը կսազի տվյալ անհատին. «Ինձ մոտ երբ գալիս են tattoo անելու, խոսում եմ նրանց հետ, փորձում հասկանալ նրանց ուզածը, ապա իրենց նկարագրածի հիման վրա 7-10 տիպի պատկերներ եմ նկարում ու մարդուն ընտրության հնարավորություն տալիս: Երեւանում այդպես չեն անում: Ասենք՝ մի աղջիկ գնա եւ ասի՝ իմ հետույքին գրուզավիկ նկարեք, հաստատ առանց մտածելու հենց այդպես էլ կանեն. դա սխալ է»:

Նշեմ, որ մեր զրուցակիցը սիրում է մեծ աշխատանքներ անել, նկարը՝ դաջվածքը, տեղավորել մարդկանց ամբողջ մարմնի վրա: Ալեքսը դաջում է ամեն ինչ՝ գիշատիչ կենդանիներից մինչեւ Կամասուտրա, որն էլ, ըստ նրա, առավել սեքսուալ է երեւում, երբ դաջում է հատկապես մարմնի ինտիմ հատվածներում: Կամասուտրայի թեման դաջվածքների տեսքով արտահայտելը նախեւառաջ արվեստ է համարում ու հորդորում՝ իր նման չվախենալ այլասերվածի պիտակավորումից: «Սիրում եմ բաց տեսարաններ նկարել, ես դեռ մանկուց սիրել եմ կնոջ կերպարը պատկերել: Այն շատ գեղեցիկ է նայվում ատլետիկ կազմվածք ունեցող տղամարդկանց մարմիններին: Չկարծեք, թե գեյ եմ, բայց տղամարդկանց մարմինների հետ աշխատել ավելի շատ եմ սիրում, որովհետեւ նրանք մեծամասամբ նախընտրում են մեծ tattoo-ներ: Իսկ մեծ աշխատանքներ անելն ինձ ավելի հաճելի է, քան, ասենք, աղջկա հետույքին մեկ հատիկ պղպեղ tattoo անելը: Ճիշտ է, դա գեղեցիկ է, սեքսուալ, բայց ամենից շատ մեծ գործերն եմ նախընտրում: Վերջում արածս գործին նայելիս երեւում է, թե ինչքան եմ չարչարվել»,- ավելացրեց Ալեքսը, որի ձեւակերպմամբ՝ դաջվածք անելը արվեստի տեսակ է, ոչ թե թիթիզություն կամ ինքնահաստատման միջոց:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ